ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/151

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Սիսիանի Հաց» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ի. Միրզոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, չամիչի, քարաղի, սխտորի, մանդարինի և ըմպելու ջրի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 11.09.2019թ.-ի թիվ ՊՆ/02/1791-2019 գրության հիման վրա, 17.09.2019թ.-ին «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 17.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 24.09.2019թ.-ին և 03.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 03.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.10.2019թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.09.2019թ.-ի թիվ ՊՆ/02/1791-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և սպորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 4-ին միակողմանի մասնակի լուծել է՝

1. «Հ.Ա.Ն.Ս.-Ֆուդ» ՍՊԸ-ի հետ 20.02.2019թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/2-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

2. «Մաստերֆուդ» ՍՊԸ-ի հետ 19.12.2018թ. կնքված N ՀՄԱԱՊՁԲ-7/5-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

3. «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի հետ 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 ծածկագրով գնման պայմանգիրը,

4. «Էրիզ» ՍՊԸ-ի հետ 14.01.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/16-2 ծածկագրով գնման պայմանգիրը,

5. Ա/Ձ Արայիկ Աբրահամյանի հետ 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/15-2 ծածկագրով գնման պայմանգիրը,

6. Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հետ 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով գնման պայմանգիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի մասնակի լուծման վերաբերյալ գրությունները 06.09.2019թ. հրապարակվել են www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 18.09.2019թ. գրությամբ դիմել է «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 11.12.2018թ. կնքվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 ծածկագրով պայմանագիր, ըստ որի «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն պետք էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարեր «Սխտոր» /գնման ժամանակացույցը կցվում է/:

Վերը նշված պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծվել է՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն չի մատակարարել ապրիլ ամսվա համար նախատեսված 140 կգ. սխտորը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը միակողմանի մասնակի լուծելով «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 19.12.2018թ. կնքված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 ծածկագրով պայմանագիրը՝ համապատասխան հիմքերը ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձ Լ. Օհանյանի վարույթում նախաձեռնվել է «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով թիվ ՍՅ-ԼՕ-2019/151 ընթացակարգը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 19.12.2018թ. կնքվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 ծածկագրով պայմանագիր, ըստ որի «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն պետք էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարեր «Սխտոր»:

Վերը նշված պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծվել է՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն չի մատակարարել ապրիլ ամսվա համար նախատեսված 140 կգ. սխտորը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր հանգամանքի վրա, այն է՝ ապրիլ ամսվա համար նախատեսված 140կգ. սխտորները մատակարարվել են համապատասխան զորամասին՝ սակայն զորամասի կողմից կազմված արձանագրությունների համաձայն սխտորները չեն համապատասխանել պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին և հղում է կատարվել ԳՈՍ-33562-2015-ին/ԳՈՍ-33562-2015 ամբողջական սկանավորված տարբերակը ուղարկվել է gbqa_ohanyan@mail.ru էլ. հասցեին/:

Վերը նշված հանգամանքի հետ կապված հայտնում ենք, որ մատկարարված սխտորները հանձնվել է զորամասին բարվոք վիճակում՝ ինչպես նախատեսվել է տեխնիկական բնութագրով, սակայն զորամասում սխտորները չեն պահպանվել այն պայմաններում՝ ինչպես նախատեսված է ԳՈՍ-33562-2015-ով, այլ սխտորները դրված են եղել այն նույն պահեստում՝ որտեղ պահպանվում էին բանջարեղենի համար չնախատեսված վայրերում՝ այնտեղ, որտեղ պահպանվում են պահածոյացված ուտելիքներ:

Համաձայն վերը նշված ԳՈՍ-33562-2015-ի սխտորները զորամասում հարկավոր էին պահպանվել՝ <<մաքուր և չոր միջավայրում, որտեղ չպետք է առկա լինեն այլ հոտեր ...>> /տես՝ ԳՈՍ-33562-2015, էջ՝ 8, կցվում է/, մինչդեռ սխտորները որակական առումով

«փչացել են» զորամասում, քանի որ չեն պահպանվել ԳՈՍ-33562-2015 սահմանված պահպանման նորմերը:

Օրինակ՝ համաձայն թիվ 16 արձանագրության /կցվում է/ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ն զորամասին սխտորը հանձնել է 19.12.2018թ., իսկ զորամասում սխտորի ուսումնասիրությունը <<լաբորատոր փորձաքննություն>> իրականացվել միայն 24.05.2019թ., այսինքն 14 օր պահելով զորամասում՝ այն էլ չպահպանելով ԳՈՍ-33562-2015 սահմանված պայմանները՝ փրամաբանական է, որ սխտորը որակական առումով արդեն իսկ չէր կարող ունենալ 19.12.2018թ. մատակարարված սխտորի տեսքը:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն ներկայացված դիրքորոշման, Մասնակիցը հայտնել է, որ *«համաձայն 10.05.2019թ. նյութատեխնիկական միջոցների ի պահ ընդունման ԱԿՏ N 315-ի 5-րդ կետի (կցվում է) ակտում նշված նյութական միջոցների որակական վիճակը համապատասխանում է պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին:*

Համաձայն 24.05.2019թ. N 16 արձանագրության (կցվում է) սխտորի ուսումնասիրության <<լաբորատոր փորձաքննություն>> իրականացվել է 24.05.2019թ., այսինքն 14 օր պահելով զորամասում այն էլ չպահպանելով ԳՈՍ-33562-2015 սահմանված պայմանները:

Այսպիսով 10.05.2019թ. ընկերությունը մատակարարել է սխտոր որի որակական վիճակը համապատասխանել է պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին, ինչը արձանագրվել է ԱԿՏ N 315-ի 5-րդ կետով, որը պատվիրատուն պահել է չպահպանելով ԳՈՍ-33562-2015 սահմանված պայմանները, ինչի արդյունքում 24.05.2019թ. «լաբորատոր փորձաքննությամբ>> արձանագրվել է, որ սխտորը (որը 10.05.2019թ. ակտի համաձայն համապատասխանում էր պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին ԳՈՍ-33562-2015) արդեն չի համապատասխանում ԳՈՍ-33562-2015-ի պահանջներին:

Առնվազն անհասկանալի է թէ ինչպես կարող էր Սխտորը 10.05.2019թ. համապատասխանել տեխնիկական բնութագրին, իսկ նույն սխտորը արդեն 24.05.2019թ. չհամապատխանել նույն տեխնիկական բնութագրին, որը արձանագրվել է համապատասխան արձանագրություններով:

Հարկ ենք համարում տեղեկացնել Ձեզ, որ 10.05.2019թ. սխտորը պատվիրատուի պահեստում բեռնաթափման ժամանակ ընկերության տնօրեն Ի. Միրզոյանը նկատելով, որ տվյալ պահեստը նախատեսված չէ բանջարեղենի պահման համար (պահեստում առկա ջերմաչափի տվյալով, պահեստում այդ պահին + 37 ^{0}c տաքություն էր/) և դրա մասին բանավոր հայտնել է պահեստի աշխատակցին:

Հարկ ենք համարում տեղեկացնել Ձեզ, որ ընկերության տնօրեն Ի. Միրզոյանը պտղաբանջարաբուծության մասնագետ է (դիպլոմը կցվում է) և ունի գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (դիպլոմը կցվում է), ինչպես նաև երկար տարիներ զբաղվում է բանջարեղենի աճեցմամբ, գյուղատնտեսության բնագավառում ունեցած հաջողությունների համար արժանացել է ՀՀ վարչապետի կողմից շնորհակալության (կցվում է) և բնութագրվում է միայն դրական:

Ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի (հավելվածը 1 կցվում է) ընկերությունը սխտորի մյուս խմբաքանակը (1310 կգ, որը մոտ 10 անգամ ավելի շատ է քան առաջին խմբաքանակը) պետք է մատակարարեր սեպտեմբեր ամսին: Ընկերությունը այն մատակարարել է սեպտեմբերի 19-ին և ըստ կազմված արձանագրության սխտորի որակական վիճակը համապատասխանել է պայմանագրում նշված տեխնիկական բնութագրին (ինչը արձանագրվել էր նաև առաջին խմբաքանակը ի պահ հանձնելուց): Այդ ժամանակ ընկերության տնօրեն Ի. Միրզոյանը պահանջել է, որ լաբարատոր փորձաքննությունը կատարվի շուտ, քանի որ ինչպես և առաջին խմբաքանակը մատակարարելու ժամանակ բանավոր տեղեկացրել էր պահեստի աշխատակցին, որ պահեստը որտեղ պահվում է սխտորը չի բավարարում բանջարեղենի (Սխտորի) պահման համար նախատեսված պայմաններին, ինչի արդյունքում սեպտեմբերի 20-ին կատարվել է լաբարատոր փորձաքննություն և լաբարատորյաի կողմից տրվել է դրական եզրակացություն 2-րդ խմբաքանակի մասով: 2-րդ խմբաքանակի մատակարարման փաստաթղթերը Ձեզ կներկայացնենք լրացուցիչ, քանի որ նրանք գտնվում են պաշտպանության նախարարությունում:

Ինչպես նաև Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ԳՈՍ-33562-2015-ին (կցվում է), որտեղ մեր կողմից կարմիրով ընդկծված 8.2-րդ կետը հստակ շարադրում է տվյալ գոստին համապատասխանող սխտորի պահման պայմանները 8.2 սխտորը պահվում է մաքուր, չոր, առանց հոտի, լավ օդափոխվող սենյակներում սահմանված կանոնների համաձայն, դրա պահպանվածությունը ապահովող պայմաններում: Պահպանման պայմանները սահմանվում են արտադրողի կողմից՝ ստանդարտն ընդունած պետության տարածքում գործող

կարգավորող փաստաթղթերի համաձայն: Տվյալ դեպքում արտադրողը հանդիսանում է ընկերությունը:»:

4. <u>ՍՑ-LO-2019/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2018թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը պարբերության պահանջները:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեին ք. Երևան, Սարմի 103 հասցե:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մի խմբաքանակի համար 2019թ.-ի ապրիլ ամսին, մյուսինը՝ սեպտեմբեր ամսին:

Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեին ք. Երևան, Սարմի 103 հասցե:

ՀՀ ՊՆ 41548 գ/մ – ելք 459 առ 24.05.2019թ.-ի լաբարատոր հետազոտության համաձայն՝ 10.05.2019թ.-ին «Սիսիանի Հաց» ՍՊԸ կողմից մատակարարված 140 կգ սխտոր, գլուխ սխտորը չի համապատասխանում ԳՕՍՏ 33562-2015-ի պահանջներին և պիտանի չէ ՀՀ ԶՈՒ անձնակազմին հատկացնելու համար:

www.gnumner.am համացանցային կայքում 06.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2019թ. ապրիլ ամսին պետք է մատակարարեր 140 կգ սխտոր, գլուխ /Սխտոր/, սակայն մատակարարումներ չէ իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 4-ին միակողմանի մասնակի լուծել է թիվ ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի

բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2018թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1» ծածկագրով պետական

գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը պարբերության պահանջները:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեին ք. Երևան, Սարմի 103 հասցե:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 25.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/9-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մի խմբաքանակի համար 2019թ.-ի ապրիլ ամսին, մյուսինը՝ սեպտեմբեր ամսին:

Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները պետք է մատակարարվեին ք. Երևան, Սարմի 103 հասցե:

ՀՀ ՊՆ 41548 գ/մ – ելք 459 առ 24.05.2019թ.-ի լաբարատոր հետազոտության համաձայն՝ 10.05.2019թ.-ին «Սիսիանի Հաց» ՍՊԸ կողմից մատակարարված 140 կգ սխտոր, գլուխ սխտորը չի համապատասխանում ԳՕՍՏ 33562-2015-ի պահանջներին և պիտանի չէ ՀՀ ԶՈՒ անձնակազմին հատկացնելու համար:

www.gnumner.am համացանցային կայքում 06.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ի միջև 19.12.2018թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 գնման պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 2019թ. ապրիլ ամսին պետք է մատակարարեր 140 կգ սխտոր, գլուխ /Սխտոր/, սակայն մատակարարումներ չեն իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. սեպտեմբերի 4-ին միակողմանի մասնակի լուծել է N ԷԱՃԱՊՁԲ-7/9-1 պայմանագիրը:

Սույն գործի փաստերի, մասնավորապես՝ Պայմանագրի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պայմանագիրը լուծվել է, հիմք ընդունելով Մասնակցի կողմից թույլ տված

ապրանքի մատակարարման ժամկետների խախտումը, սակայն Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ ՊՆ 41548 գ/մ – ելք 459 առ 24.05.2019թ.-ի լաբարատոր հետազոտությունը, փաստում է, որ 2019թ.-ի ապրիլ ամսին նախատեսված 140 կգ սխտոր, գլուխ /Սխտոր/ մատակարարվել է, սակայն չի համապատասխանել ԳՕՍՏ 33562-2015-ի պահանջներին: Նման պայմաններում, հարկ է նկատել, որ Պայմանագրի լուծման հիմքում առկա փաստական հանգամանքները (ժամկետի խախտում) առկա չէ, որպիսի պայմաններում, մատակարարման ժամկետների խախտման հիմքով Պայմանագրի լուծումը դառնում է ոչ իրավաչափ, քանի որ ոչ թե խախտվել է ապրանքների մատակարարման ժամկետը, այլ մատակարարված ապրանքն եղել է անպատշաճ որակի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.09.2019թ. թիվ 26/26-1/15356-2019 գրությամբ «Սիսիանի Հաց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**